

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցող

ՏՈՒԳԱՆՔԻ՝ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների սուբյեկտների խախտված որոշ իրավունքների և ազատությունների սահմանադրորեն երաշխավորված դատական և վարչական պաշտպանության արդյունքն ամփոփվում է համապատասխանաբար դատական, վարչական կամ օրենսդրությամբ նման իրավագործությամբ օժտված այլ մարմինների ակտերում: Սակայն հայտնի է, որ դրանք ինքնակամ գրեթե չեն կատարվում, ուստի այս հարցում ակնհայտորեն անգնահատելի մեծ է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության դերը և վերջինիս գործունեության արդյունքն ամրագրող և ամփոփող հարկադիր կատարման վարույթը:

Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի և վերջինիս իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ գիտական հարթակներում շրջանառվող քննարկումները և բանավեճերն արդիական են, այդ թվում՝ հարկադիր կատարման ոչ ավանդական և ոչ անմիջական միջոցների ընտրության և կիրառման հարցում:

Հոդվածը նվիրված է կատարողական վարույթում հարկադիր կատարողների գործառույթներից մեկի, հարկադիր կատարման միջոց հանդիսացող «տուգանքի» կիրառման արդի խնդիրներին և բարելավման ուղղություններին:

Հիմնարառեր- հարկադիր կատարման վարույթ, հարկադիր կատարման միջոց, տուգանք, վարչական տուգանք:

Ի կատարումն կանոնի չկատարված հարկադիր կատարման ենթակա դատական և իրավագոր այլ մարմինների ակտերի, հարկադիր կատարողը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված ընթացակարգով հարուցում և վարում է կատարողական վարույթ:

Հարկադիր կատարողը դատական ակտերի հարկադիր կատարման նյութական (իրական) նպատակի իրագործմանը հասնում է Օրենքով ամրագրված հարկադիր կատարման միջոցների օգնությամբ՝ ներգործությամբ:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցներն են՝

- 1) արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը,
- 2) պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը,
- 3) այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը,
- 4) կատարողական թերթում նշված որոշակի առարկաները պարտապանից առգրավելը և պահանջատիրոջը հանձնելը,

4.1) հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելը,

5) կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ :

Օրենքով սահմանված վերը նշված հարկադիր կատարման միջոցները պարտապանի և (կամ) նրա գույքի նկատմամբ կիրառվող իրավական ներգործության այն միջոցներն են, որոնք անմիջականորեն ուղղված են դատական ակտով կամ Օրենքով սահմանված իրավագոր այլ մարմինների ակտերով (այսուհետ նաև՝ Ակտեր) սահմանված որևէ պարտավորության կատարմանը՝ պարտապանի կամքին հակառակ: Սույն միջոցները հանդես են գալիս որպես կատարողական վարույթի իրականացման առանցքային դրույթներ, քանի որ դրանք իրավական ներգործության այն կառուցակարգերն են, որոնց գործադրմամբ իրագործվում է կատարողական վարույթի նպատակը՝ Ակտով որոշված, սահմանված պարտավորության հարկադիր կատարումը:

Կատարողական վարույթի մեկնարկը տրվում է կատարողական վարույթի հարուցմամբ և եզրափակվում կամ Ակտի կատարմամբ, կամ Ակտի կատարման անհնարինությամբ, որի գլխավոր նպատակը Օրենքով ամրագրված ընթացակարգով կատարողական վարույթով, դատական կամ

իրավագոր այլ մարմնի ակտով որոշված պահանջի կատարմանը հասնելն է:

Հարկադիր կատարման վարույթի վարման ընթացքում կիրառվող հարկադիր կատարման վերոնշյալ միջոցների մեջ առանձնահատուկ կարևոր է «հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելու» միջոցի նշանակությունը:

Հարկադիր կատարման այս գործիքի՝ տուգանք կիրառելու կարևորության հիմնական՝ առաջին հատկանիշը պայմանավորված է հարկադիր կատարման ենթակա Ակտի պահանջի կատարմանը, ոչ անմիջական հարկադրմամբ հասնելու կարևորությամբ այն դեպքում, երբ պարտավոր անձի կողմից գործելու պարտականությունը որոշված է Ակտով, իսկ այդ պահանջը նրա փոխարեն որևէ մեկի կողմից կատարելու գործողությունը սահմանափակված կամ նախատեսված չէ իրավունքի ուժով՝ օրենքով: Այսինքն՝ պարտապանը ի շահ պահանջատիրոջ պետք է անձամբ կատարի որևէ գործողություն կամ ձեռնպահ մնա դրանց կատարումից, սակայն կամովին չի կատարում:

Հարկադիր կատարման հիշյալ միջոցի անհրաժեշտությունն ավելի հաճախ առաջանում է նաև այն դեպքում, երբ հարկադիր կատարողի կողմից կայացված որևէ որոշում չի կատարվում այն անձի (այդ թվում իրավաբանական անձի) կողմից, ում հասցեագրված է տվյալ որոշման պահանջը: Դիցուք որոշմամբ սահմանվել է որևէ պարտավորության կատարում, օրինակ՝ պարտապանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների արգելադրում, որը սակայն հանիրավի չի կատարվում:

Հարկադիր կատարողի կողմից տուգանք կիրառելու երկրորդ՝ ֆակուլտատիվ հատկանիշի կարևորությունը պայմանավորված է հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումների համապարտադիր լինելու նշանակությամբ, որոշակիությունամբ և հրատապությամբ:

Մինչ մեր տեսակետի ներկայացումը ընդգծենք, որ կան այնպիսի պարտավորություններ սահմանող դատական ակտեր, որոնց հարկադիր կատարման համար Օրենքով՝ կոնկրետ կամ որոշակի հարկադիր կատարման միջոցներ չեն սահմանվում և այդ պարտավորությունների կատարումը պետք է (հնարավոր է) իրականացվի բացառապես անձամբ պարտապանի կողմից: Դրանց շարքին կարելի է դասել գործատուի կողմից աշխատողին իր նախկին աշխատանքում վերականգնելը (համապատասխան հրաման կամ կարգադրություն արձակելը, աշխատանքային պարտականությունների կատարմանը թույլատրելը, աշխատանքային գրքույկում համապատասխան գրառում կա-

տարելը, որոշակի փաստաթղթեր կամ ապացույցներ տրամադրելը և այլն), որևէ անձնական ոչ գույքային իրավունքի խախտում վերացնելը (անձի պատիվն ու արժանապատվությունը, գործարար համբավն արատավորելու դեպքում՝ հրապարակայնորեն հերքելը), որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող կատարողական թերթերի կատարումը և այլն:

Այստեղ հատկանշականն այն է, որ օբյեկտիվ իրականությունը և իրավակիրառ պրակտիկան, անկախ հարկադիր կատարման միջոցների վերաբերյալ օրենսդիր մարմնի ընդունած դրույթներից, այլ են. պարտապանը կարող է շարունակաբար տարբեր գրկանքներ կրել՝ վճարել տուգանք, ենթարկվել իր իրավունքների տարբեր սահմանափակումների, նույնիսկ ենթարկվել քրեական պատասխանատվության՝ վճարել տուգանք, գրկվել որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից, գրկվել ազատությունից, սակայն այդպես էլ չկատարել դատական ակտով սահմանված իր պարտավորությունը, որը կարող է և պետք է կատարի անձամբ: Իրավակիրառ պրակտիկայում հաճախ կարող են լինել նաև այնպիսի դեպքեր, երբ ոչ մի կերպ պարտապանին հնարավոր չէ հարկադրել կատարել այս կամ այն դատական ակտի պահանջը²:

Հաճախ են հանդիպում նաև այնպիսի դատական ակտեր, որոնցով սահմանված գործողությունը՝ հարկադիր կատարողը պարտապանի փոխարեն կարող է կատարել Օրենքի ուժով, օրինակ՝ վտարում, բնակեցում, ինքնական կառուցված անշարժ գույքի ապամոնտաժում և այլն:

Թեպետ հարկ է նշել, որ օրենսդրական բացերի թվում է այն հանգամանքը, որ օրենսդիրը չի տարանջատել կամ սահմանել այն սկզբունքները, թե պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող, ո՞ր կատարողական թերթերի կատարմանն ուղղված և ինչպիսի՞ կատարողական գործողություններ կարող են կազմակերպվել և իրականացվել հարկադիր կատարողի նախաձեռնությամբ:

Ուստի, իրավատեսական և իրավակիրառ տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում այն հարցի պատասխանը, թե հարկադիր կատարման ինչ միջոցներ են անհրաժեշտ սահմանել այնպիսի պարտավորությունների կատարման համար, որոնք պարտապանը պետք է և կարող է անձամբ կատարել, սակայն հրաժարվում է:

Անդրադառնալով հարկադիր կատարողի կայացրած որոշման պարտադիր կատարման հատկանիշին՝ նշենք, որ վկայակոչված դրույթն ամրագրված է Օրենքի 71-րդ հոդվածում, համաձայն

որի՝ «Հարկադիր կատարողի՝ իր իրավասության սահմաններում կայացրած որոշումները պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար ու ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում»⁴, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Հարկադիր կատարողի՝ իր իրավասության սահմաններում առաջադրած պահանջների կատարումը պարտադիր է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու քաղաքացիների համար»:

Սակայն, հարկ է նշել, որ նորմատիվ իրավական ակտերում հռչակագրային բնույթի սահմանումները դեռևս բավարար չէ նպատակին հասնելու համար, անհրաժեշտ են ընթացակարգային գործիքներ, վարչական ներգործության միջոցներ, համապատասխան կառուցակարգեր, որոնցից մեկն էլ հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելու վերաբերյալ միջոցն է: Հարկադիր կատարողի կողմից կիրառվող տուգանքը, հանդես է գալիս որպես վարչական ներգործության անհրաժեշտ գործիք՝ պարտավոր անձի վարքագծի, ինչպես նաև դատական կամ իրավագործ ալ մարմինների ակտերի կատարմանը հասնելու հնարավոր և հրատապ միջոց:

Այն վարչական իրավախախտումները, որոնք մի կողմից հանդիսանում են հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունների կատարմանն օժանդակող միջոցներ, մյուս կողմից՝ արդարադատության իրականացման բնագավառում կառավարչական հասարակական հարաբերությունների դեմ ոտնձգող զանցանքներ, նախատեսված են գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206⁵-րդ և 206⁹-րդ հոդվածներով:

Հարկ է նշել, որ շրջանառության մեջ է դրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագիծը և ՀՀ Ազգային ժողով ներկայացնելուն հավանություն տալու նպատակով, սույն թվականի ապրիլի 27-ին ընդգրկվել է Կառավարության նիստի օրակարգում⁷, որի վերոնշյալ հարցերի առնչությամբ առաջարկված իրավակարգավորումներին կանդիդատականք ստորև:

Իրավագիտության տարբեր տեսաբաններ, Ակտերի հարկադիր կատարման համապատասխան միջոցների ընտրության և կիրառման հարցը համարում են արդիական:

Դատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետ կառուցակարգերի գոյությունը կոչված է ապահովելու պարտատիրոջ այն իրավունքների պաշտպանությունը, ինչպիսիք են՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար դատաքննության իրավունքները, իսկ գույքային պահանջների դեպքում՝ նաև սեփականության պաշտպանության իրավունքը⁸:

Հարցին անդրադարձած ռուս իրավագետներ Ի. Բ. Մորոզովան և Ա. Մ. Տրեուշնիկովան իրենց համահեղինակային աշխատությունում առաջարկում են վերանայել հնարավոր անուղղակի հարկադրանքի միջոցները՝ կարևորելով դրանց գործնական կիրառումը դատական ակտի կատարման նկատմամբ: Ըստ հեղինակների՝ պարտապանի անհարգալից, թեթևամիտ վերաբերմունքի պայմաններում ճիշտ ընտրված հարկադրանքի միջոցը կարող է հանդես գալ որպես համաչափ վարչարարություն, լինել միանգամայն արդյունավետ և դյուրին դարձնել հարկադիր կատարողի գործառույթը:

Մեկ այլ ռուս իրավագետ պրոֆեսոր Ի. Վ. Ռեշետնիկովան առաջարկում է անբարեխիղճ պարտապանների նկատմամբ կիրառել հարկադրանքի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հանրային աշխատանքները, պետական բյուջեի օգտին բռնագանձման ենթակա գումարի չափով տուգանքի կիրառումը և այլն¹⁰:

Նմանատիպ տուգանքի՝ աստրենտի կիրառումը հարկադրում է պարտապանին ժամանակին կատարել Ակտի պահանջը, միաժամանակ հանդես գալով հարկադիր կատարման միջոց, այն դեպքում, երբ վերջինս շեղվում է պահանջի կատարումից:

Կիրառենք մոդելավորման մեթոդը, ընդունենք, որ Օրենքով սահմանված պատշաճ ընթացակարգով վարվող որևէ կատարողական վարույթի վարման ընթացքում հարկադիր կատարողը ձեռնարկված կատարողական գործողությունների արդյունքում հանգում է պարտապանի, Օրենքով նախատեսված դեպքերում նաև՝ այլ անձանց նկատմամբ Օրենքի 5-րդ հոդվածի 4.1 կետով սահմանված տուգանքի կիրառման անհրաժեշտության կամ անխուսափելիության: Վկայակոչված հոդվածով օրենսդիրը սահմանել է, որ հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար կիրառվում է տուգանք:

Ակնհայտ է, որ նշված եզրույթը՝ «տուգանք կիրառելը», դեռևս բավարար չէ հասկանալու համար, որ օրենսդիրը տվյալ պարագայում բացառապես նկատի է ունեցել վարչական իրավախախտում կատարելու համար նախատեսված (կիրառվող) վարչական տույժը՝ որպես վարչական պատասխանատվության տեսակ կիրառելը: Հետևաբար հարց

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

է ծագում, թե ինչ է նշանակում «տուգանք կիրառել» վերտառությամբ եզրույթը հարկադիր կատարման ժամանակակից իրավագիտությունում, և որտեղ պետք է փնտրել վերջինիս նյութաիրավական ամբողջումը:

Այնուամենայնիվ, ըստ Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու, ինչպես նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու, դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու դեպքերում հարկադիր կատարողն իրավունք ունի իր որոշմամբ կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ¹¹:

Ըստ վկայակոչված հոդվածի՝ հարկադիր կատարողը վերը նշված իրավախախտ արարքների առկայության դեպքում պետք է որոշում կայացնի անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Այնհայտ է, որ տվյալ իրավիճակում հարկադիր կատարման վարույթը հանդես է գալիս որպես իրավախախտ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթ՝ վարչական վարույթի առանձին տեսակ, հետևապես անձին վերագրվող հանրորեն վտանգավոր արարքը պետք է նախատեսված լինի և համապատասխանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ ՎԻՎՕ) նորմատիվ պահանջներին:

Վերը շարադրվածից բխում է նաև, որ հարկադիր կատարողի կողմից իրավախախտ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելու անհրաժեշտության դեպքում, բացի իրավունքի վարույթային (պրոցեստուալ) աղբյուր հանդիսացող Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից, անհրաժեշտ է նաև համապատասխան նյութական իրավունքի աղբյուր, տվյալ դեպքում՝ ՎԻՎՕ-ի հատուկ մասում սահմանված համապատասխան իրավական նորմ՝ հոդված: Այսինքն՝ հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելը պետք է հանդիսանա զանցանք, որը սահմանված լինին ՎԻՎՕ-ով:

Սակայն, ՎԻՎՕ-ի 14¹-րդ գլուխը՝ «Վարչական իրավախախտումներ արդարադատության իրականացման բնագավառում» վերտառությամբ, ինչպես արդեն վերը նշեցինք, ներկայումս բովանդակում է կատարողական վարույթի իրավահարաբերություններին վերաբերելի ընդամենը երկու նորմ՝ 206⁵-րդ և 206⁹-րդ հոդվածները:

Ըստ ՎԻՎՕ-ի 206⁵-րդ հոդվածի՝ «...հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով»¹²:

Նույն օրենսգրքի 206⁹-րդ հոդվածը սահմանում է. «Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում՝ այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քաղաքացիների կողմից դիտավորությամբ չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով»¹³:

Նշված հոդվածներով նախատեսված իրավական նորմերի բովանդակային ուսումնասիրությունը փաստում է, որ օրենսդիրը զանցանք չի համարում հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելը, վերջինիս դիմադրություն ցույց տալը, պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու, հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու Օրենքով սահմանված արարքները:

Մինչդեռ Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վերոբերյալ արարքները ըստ օրենսդիր մարմնի իրավախախտման այնպիսի տեսակներ են, որոնց նկատմամբ հարկադիր կատարողն իրավունք ունի իր որոշմամբ կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ:

Ամփոփելով վերոգրյալ վերլուծությունը, հավելենք, որ վերը նշված օրենսդրական բացը մասամբ իրավակարգավորում է ստացել ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում՝ «Կատարողական վարույթի վերաբերյալ օրենսդրությունը խախտելը» վերտառությամբ իրավական նորմում:

Ըստ ՎԻՎՕ օրենսգրքի նախագծի 561-րդ հոդվածի.

«1. Հարկադիր կատարողի որոշումները կամ օրինական պահանջները դիտավորությամբ չկատարելը կամ հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը խոչընդոտելը՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկա-

www.journal.lawinstitute.am

կան անձի նկատմամբ՝ քսան հազար դրամից հիստուն հազար դրամի չափով, իրավաբանական անձի նկատմամբ՝ հիսուն հազար դրամից հարյուր հազար դրամի չափով:

2. Պարտապանի հաշիվների սպասարկում իրականացնող բանկի կամ ֆինանսավարկային այլ կազմակերպության կողմից կատարողական թերթով սահմանված՝ պարտապանից դրամական միջոցներ բռնագանձելու պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով»:

Օրենսգրքի նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքում¹⁴:

Ուսումնասիրելով ՎԻՎՕ նախագծով առաջարկված իրավանորմի իրավակարգավորումները, այնուամենայնիվ պետք է եզրահանգել, որ հարկադիր կատարման վարույթի բազմաբովանդակ իրավահարաբերությունների համար այն համապարփակ կարգավորում չի նախատեսել:

Մասնավորապես պետք է ընդգծել, որ իրավանորմի դիսպոզիցիայում նկարագրված արարքների համար նախատեսված սանկցիան՝ տուգանքի սահմանաչափը չի կարող բավարար չափով կատարել նույն օրենսգրքի, ընդհանուր մասի, 2-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ վարչական իրավունքի և սույն օրենսգրքի կանխարգելիչ ֆունկցիայի դերը:

Հարկադիր կատարողների կողմից կայացված որոշումները ավելի հաճախ բովանդակում են այնպիսի իրավակարգավորումներ որոնց պահանջը չկատարելու համար ՎԻՎՕ նախագծով սահմանված չափի տուգանք վճարելը ավելի նպատակահարմար և ցանկալի կլինի, քան որոշման պահանջը կատարելը:

Ավելին, ՎԻՎՕ նախագծում իրավակարգավորում չի ստացել, վերը նշված իրավանորմի դիսպոզիցիայում նկարագրված արարքները, վարչական տույժի ենթարկվելուց հետո կրկին անգամ կատարելու հանգամանքը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածով սահմանված «Պատասխանատվությունը բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից կատարողական թերթը չկատարելու համար» վերտառությամբ իրավանորմը սահմանում է.

«Պարտապանի հաշիվների սպասարկում իրականացնող բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից կատարողական թերթով սահմանված պարտապանից դրամական միջոցներ բռնագանձելու պահանջները չկատարելը հիմք է հարկադիր կատարողի կողմից այդ բանկին կամ

վարկային կազմակերպությանը բռնագանձվող գումարի հիսուն տոկոսի չափով տուգանելու համար»:

Նշված հոդվածով սահմանված 50% չափով տուգանք նախատեսելը անհրաժեշտ հակակշիռ և զսպաշապիկ է այն բանկերի կամ վարկային կազմակերպությունների համար, որոնք սպասարկելով պարտապան հաճախորդին, կարող են ցածր սահմանաչափի տույժերի դեպքում հաճոյանալ վերջինիս, փոխադարձ համաձայնությամբ չկատարել հարկադիր կատարողի որոշման պահանջը, արդյունքում պատրաստ լինելով ենթարկվել և վճարել 100.000 կամ 150.000 դրամ տույժ, այն դեպքում, երբ որոշմամբ սահմանված բռնագանձման ենթակա պահանջը հասնում է միլիոնների:

Հետևապես կարծում են, ՎԻՎՕ նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հարյուր հազարի դրամից հարյուր հիսուն հազար դրամի չափով տուգանք նախատեսելը իրավակիրառ պրակտիկայում խոցելի է, իրավատեսական առումով չհիմնավորված, միաժամանակ սույն իրավակարգավորումը հակասում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածով սահմանված պահանջին:

Մեր կարծիքով, անընդունելի է նաև օրենսդիր մարմնի մեկ այլ սելեկտիվ (ընտրանքային) մոտեցումը, որը ցուցաբերվել է Ծառայության և այլ իրավապահ գործառույթով օժտված մարմինների՝ պաշտոնատար անձանց իրավունքների և լիազորությունների պաշտապանության երաշխիքներ տրամադրելու հարցում:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի «Արդարադատությանը և քննության իրականացմանը խոչընդոտելը» վերտառությամբ հոդվածը պատասխանատվություն է նախատեսված արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով ցանկացած ձևով դատարանի գործունեությանը միջամտելու, ինչպես նաև դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը կամ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով ցանկացած ձևով միջամտելը: Այնինչ հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը (միջամտելը), ըստ ՎԻՎ գործող օրենսգրքի (հոդված 206⁵) և միաժամանակ ՎԻՎՕ նախագծի (հոդված 557) ընդամենը հանդիսանում է զանցանք:

Թեպետ գործնականում քիչ չեն այնպիսի դեպքեր, երբ հարկադիր կատարողի գործառույթների կատարմանը խոչընդոտելը ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան և արդյունքում վտանգվում, խաթարվում է Միջազգային պաշ-

մանագրերով, Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված արդարադատությունը:

Այդ մասին է վկայում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային որոշումը, ըստ որի՝ « (...) դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է, այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուրյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում»¹⁵:

« (...) դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ամենացվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ, հակառակ պարագայում կիմաստագրվեն ոչ միայն պետական, այդ թվում՝ դատական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, այլև ընդհանրապես արդարադատության և դատական գործառույթներ իրականացնող այլ մարմինների համակարգի գոյությունը: Հետևաբար՝ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի իրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ»¹⁶:

Մեջբերելով դատական պրակտիկայի վերոնշյալ եզրահանգումները՝ պետք է փաստել, որ հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը (միջամտելը), ըստ մեզ պետք է դասել քրեորեն հետապնդելի հանրորեն վտանգավոր արարքների շարքը, դրանով իսկ ընդգծելով հարկադիր կատարողին վերապահված լիազորությունների դերն ու նշանակությունը դատական ակտի և իրավագործ այլ մարմինների ակտերի հարկադիր

կատարման գործում: Միաժամանակ, քննարկվող իրավախախտման քրեականացումը անհրաժեշտ հավասարակշռություն կստեղծի հարկադիր կատարողին վերագրված լիազորությունների կատարման համար, հանդիսանալով հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման գործում լիազորված պաշտոնատար անձանց իրավունքների ապահովման օրենքով սահմանված համապատասխան երաշխիք:

Շարունակելով քրեաիրավահարաբերություններում կատարողական վարույթին վերաբերելի հոդվածների վերլուծությունը՝ նշենք, որ 2006 թվականի հունվարի 19-ին ուժի մեջ է մտել ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՕ-15-Ն օրենքը, համաձայն որի՝ պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելը, երբ հայտարարագիր տալը պարտադիր է, ինչպես նաև հայտարարագրում գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի վերաբերյալ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելը կամ դրանք թաքցնելը, որոնք հանգեցրել են խոշոր չափերի պարտավորության հարկադիր կատարման անհնարինության, պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: Հոդվածում խոշոր չափ է նախատեսվել հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը) :

Մեջբերված հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ իրավական նորմի դիսպոզիցիայում նկարագրված արարքը, որը հանգեցրել կամ կարող է հանգեցնել մինչև նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը չգերազանցող պարտավորության հարկադիր կատարման անհնարինության, քրեորեն հետապնդելի չէ, ավելին՝ այն հանրորեն վտանգավոր չէ:

Թեպետ նկարագրված արարքների համար Օրենքի 72-րդ հոդվածը սահմանում է վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն:

Վերոբերյալ իրավանորմերի համեմատության արդյունքում կարող ենք փաստել, որ ՀՀ քրեական օրենսգրքի և Օրենքի վերոնշյալ իրավանորմերում նկարագրված արարքների հանրային վտանգավորության սահմանազատման հիմքը, նշված արարքների արդյունքում առաջացրած 500.000 դրամ և ավելի պարտավորության հարկադիր կատարման անհնարինությունն է: Հետևապես հարկ է, որպեսզի մինչ 500.000 դրամ և ավելի պարտավորության

հարկադիր կատարման անհնարինության դեպքում, վերը շարադրված արարքները, ՎԻՎՕ-ով նախատեսված համապատասխան իրավանորմով որակվեն որպես զանցանք:

Թեպետ վերոբերյալ իրավանորմերի համադրության և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պետք է եզրահանգել, որ մեջքերված իրավանորմերում սահմանված՝ «պարտապանի կողմից հայտարարվող ներկայացնելուց չարամտորեն խուսափելը», այն դեպքում, երբ այն պարտադիր է, բոլոր դեպքերում անկախ առաջացրած հետևանքից և դրա չափից, ի սկզբանե պետք է նախատեսված լինի առանձին իրավանորմով որպես հանրորեն վտանգավոր արարք՝ զանցանք, քանի որ այդ դեպքում խաթարվում է Օրենքով նախատեսված, հարկադիր կատարման վարույթով անհրաժեշտ և պարտադիր, կատարողական գործողությունների շարքում ընդգրկված պահանջը:

Այն է՝ «Հարկադիր կատարողը կատարողական վարույթ հարուցելուց հետո հայտարարագիր է վերցնում պարտապանից նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի սահմանած կարգով, եթե կատարողական վարույթ հարուցելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, պարտապանը չի կատարում կատարողական թերթի պահանջները: Պարտապանը պարտավոր է հայտարարագրում տեղեկություններ ներկայացնել նաև սեփականության իրավունքով իրեն պատկանած, սակայն վերջին 6 ամսվա ընթացքում օտարված անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների մասին»¹⁸:

Հարկադիր կատարողին իր ծառայողական լիազորություններն իրականացնելու ընթացքում *դիմադրություն* ցույց տալու դեպքում, օրենսդիրը որպես հանրորեն վտանգավոր արարք՝ հանցանք կամ զանցանք չի համարել և նյութական իրավունքի որևէ նորմով համապատասխան պատասխանատվության միջոցներ չի նախատեսել: Թեպետ վերջինիս համար Օրենքի 72-րդ հոդվածը սահմանում է վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն. «Քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքում (...) հարկադիր կատարողն իրավունք ունի իր որոշմամբ կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ:

Հարկ է նկատել, որ «*դիմադրություն*» և «*խոչընդոտ*» վերտառությամբ տերմինները¹⁹, թեպետ նման են, սակայն չեն նույնանում: Ըստ Է. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»

դիմադրությունը մեկնաբանվում է, որպես մեկի կամ քին՝ ցանկությանը հակառակել՝ չենթարկվել, մի բան անելուն արգելք լինել, ընդդիմանալ: Ինչ վերաբերում է *խոչընդոտելուն*, ապա ըստ վերջինիս մեկնաբանության՝ դժվարություններ ու արգելքներ հարուցել մի բանի առջև, խանգարիչ՝ խափանիչ հանգամանքներ ստեղծել:

Վերոգրյալից պետք է եզրակացնել, որ հարկադիր կատարողի գործողություններին դիտավորյալ խոչընդոտելը, այնուամենայնիվ միշտ չէ, որ կարելի է նույնացնել դիմադրության հետ, հետևապես հարկադիր կատարողը, որպես վարչարարություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձ, հանուն Հայաստանի Հանրապետության կայացված դատական ակտերի և Օրենքով սահմանված իրավագոր ալ մարմինների ակտերի պահանջը, օրենսդրությամբ նախատեսված իր լիազորություններին համապատասխան իրականացնելու համար բավարար չափով երաշխավորված և ապահովված չէ: Դիցուք, Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված «հարկադիր կատարողին դիմադրություն» ցույց տալու վերտառությամբ նորմը մնացել է առարկայագուրկ, քանի որ նյութաիրավական ամրագրում չի ստացել: Թեպետ միաժամանակ պետք է նշել, որ ՎԻՎՕ նախագծի 561-րդ հոդվածով, Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված որոշ դրույթներ այնուամենայնիվ ստացել են իրենց լուծումը, մասնավորապես՝ հարկադիր կատարողի որոշումները կամ օրինական պահանջները կամ հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը խոչընդոտելը այլևս զանցանքներ են, սակայն պետք է նկատել, որ դրանք համակողմանի և ամբողջական չեն:

Հատկանշական է սակայն այն, որ ՎԻՎՕ նախագծի 82-րդ հոդվածով նախատեսվել է, որ սույն օրենսգրքի «Կատարողական վարույթի վերաբերյալ օրենսդրությունը խախտելը» վերտառությամբ 561-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքներ (զանցանքներ) հայտնաբերելու դեպքում, հարկադիր կատարողն իրավունք ունի հարուցել և իրականացնել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ և իրավախախտին վարչական պատասխանատվության ենթարկել ՎԻՎՕ-ով նախատեսված այլ վարչական մարմիններին (հարկային, մաքսային, ոստիկանության, պաշտպանության նախարարության և այլն) վերապահված ընդհանուր ընթացակարգին, լիազորություններին համապատասխան:

Այլ կերպ՝ Ծառայությունը կամ վերջինիս անունից հանդես եկող պաշտոնատար անձ՝ հարկադիր կատարողը, հանդիսանում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր հարուցելու և

իրականացնելու համապատասխան պատասխանատվության ենթարկելու համար իրավասու սուբյեկտ (լիազոր մարմին կամ պաշտոնատար անձ):

Մեր կարծիքով, առաջարկված իրավակարգավորումը առաջադեմ է, քանի որ դատական ակտերի և Օրենքով նախատեսված հարկադիր կատարման ենթակա ցանկացած Ակտերի ժամանակին, լրիվ և ճիշտ կատարման համար համապատասխան նախադրյալներ ստեղծելը, աղերս ունի վարչարարության հիմնարար սկզբունքներին համապատասխան, հարկադիր կատարման վարույթով անհրաժեշտ վարչական ընթացակարգեր նախատեսելու, այդ թվում՝ հարկադիր կատարողի կողմից տուգանք՝ որպես վարչական տույժ և որպես աստրենա՝²⁰ կիրառելու հետ:

Այսպիսով, սույն հոդվածով կատարված ուսումնասիրությամբ պետք է եզրահանգել, որ հարկադիր կատարման ինստիտուտի և դրանում ընթացող իրավահարաբերությունների առավել ամբողջական և համապարփակ կարգավորում ակնկալելու, կատարողական վարույթում անհրաժեշտ և արդյունավետ վարչարարություն իրականացնելու երաշխիք ունենալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ պետք է ստեղծել համապատասխան կառուցակարգեր և վերանայել գործող օրենսդրության որոշ հակասական դրույթներ:

¹ Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 1998.06.15/12(45), օրենք, ՀՕ-221, ուժի մեջ է մտել 01.01.1999թ., հոդ. 5-րդ:

² Տես, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԼԳ/0005/01/11 քրեական գործը:

³ Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 1998.06.15/12(45), օրենք, ՀՕ-221, ուժի մեջ է մտել 01.01.1999թ., հոդված 62-րդ:

Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող կատարողական քերթի հիման վրա կատարողական վարույթ հարուցելուց հետո հարկադիր կատարողը պարտապանի համար սահմանում է դրանց կատարման ժամկետ: Սահմանված ժամկետում այդ պահանջները չկատարելու դեպքում հարկադիր կատարողը կազմակերպում է կատարողական քերթի կատարումը՝ իր որոշմամբ պարտապանից բռնագանձելով փաստացի կատարված կատարման ծախսերի եռապատիկի չափով:

⁴ Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 1998.06.15/12(45), օրենք, ՀՕ-221, ուժի մեջ է մտել 01.01.1999թ., հոդ. 71-րդ:

⁵ Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2004.03.31/18(317), հոդված 412-րդ, օրենք ՀՕ-40, ուժի մեջ է մտել 10.04.2004թ.:

⁶ Սկզբնաղբյուրը՝ ՀՍՍՀԳ-ՍՍ 1985/23, օրենսգիրք, ՀՕ-221, ուժի մեջ է մտել 01.06.1986թ.:

⁷ <https://www.e-gov.am/sessions/>

⁸ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը՝ VASILOPOULOU v. GREECE գործով (N 47541/99) 21.03.2002թ. վճռի 22-րդ կետը, BURDOV v. RUSSIA գործով (N 59498/00) 07.05.2002թ. վճռի 40-րդ կետը, TIMOFEYEV v. RUSSIA գործով (N 58263/00) 23.10.2003թ. վճռի 45-րդ կետը, BURDOV v. RUSSIA (No. 2) գործով (N 33509/04) 15.01.2009թ. վճռի 87 կետը:

⁹ Морозова И.Б., Треушников А.М., Исполнительное производство, Москва, Городец, 2004, С. 19.

¹⁰ Решетников И.В., Исполнительное производство за рубежом, Право и экономика, Москва, 2001, N 3. С. 40-41.

¹¹ Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 1998.06.15/12(45), օրենք, ՀՕ-221, ուժի մեջ է մտել 01.01.1999թ., հոդ. 71-րդ:

¹² Սկզբնաղբյուրը՝ ՀՍՍՀԳ-ՍՍ 1985/23, օրենսգիրք, ՀՕ-221, ընդունող մարմին՝ Գերագույն խորհուրդ, ուժի մեջ է մտել 01.06.1986թ., հոդված 206⁵-րդ:

¹³ Սկզբնաղբյուրը՝ ՀՍՍՀԳ-ՍՍ 1985/23, օրենսգիրք, ՀՕ-221, ընդունող մարմին՝ Գերագույն խորհուրդ, ուժի մեջ է մտել 01.06.1986թ., հոդված 206⁹-րդ:

¹⁴ <http://www.moj.am/legal/view/article/974>

¹⁵ Սկզբնաղբյուր՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 09.09.2003թ. «Հարկադիր կատարման մասին» Rec 2003(17) հանձնարարականը

¹⁶ Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2013.10.02/54(994) հոդված 895-րդ Որոշում, ՍԳ-Ո-1115, ՀՀ Սահմանադրական դատարան, ուժի մեջ է մտել 24.09.2013թ.:

¹⁷ Սկզբնաղբյուր՝ ՀՀ ՊՏ 2006.01.18/3(458), հոդված 73-րդ, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-15-Ն, ուժի մեջ է մտել 19.01.2006թ.:

¹⁸ Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 1998.06.15/12(45), օրենք ՀՕ-221, ուժի մեջ է մտել 01.01.1999թ., հոդված 30-րդ:

¹⁹ Արդի հայերենի բացատրական բառարան: Էդուարդ Բագրատի Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976թ., էջ 595:

²⁰ Мирошниченко. А. А.: Средства принуждения должника к исполнению судебных актов: [сравнительно-правовой обзор] /Арбитражный и гражданский процесс. 2013. N 2. С. 43 – 48, N 3. С. 51 – 56.

Армен Арутюнян

Начальник отдела Ачапняк и Давидашен города Еревана
службы обеспечения принудительного исполнения
судебных актов министерства юстиции РА,
соискатель кафедры юриспруденции
Академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Актуальные задачи улучшения штрафа как средства принудительного исполнения

Результат защиты гарантированной конституцией судебной и административной защиты некоторых нарушенных прав и свобод субъектов общественных и частных правоотношений обобщается в соответствующих судебных или административных актах. Однако известно, что они добровольно практически не выполняются, следовательно, в данном вопросе очевидно неопенимо велика роль Службы, обеспечивающей принудительное исполнение судебных актов, а также закрепляющее и обобщающее результат деятельности последней производство по принудительному исполнению.

Обсуждения и дискуссии, фигурирующие на научных платформах относительно производства по принудительному исполнению судебного акта и правоприменительной практики последнего актуальны, в том числе, в вопросе выбора и применения нетрадиционных и непрямых средств принудительного исполнения.

Статья посвящена одной из функций принудительных исполнителей в исполнительном производстве - актуальным задачам и путям улучшения применения “штрафа” как средства принудительного исполнения.

Ключевые слова: производство по принудительному исполнению, средство принудительного исполнения, штраф, административный штраф.

Armen Harutyunyan

Head of Ajapnyak and Davitashen Department of Yerevan
of Judicial Acts Compulsory Enforcement Service
of the Ministry of Justice of the Republic of Armenia,
Research Applicant at the Department
of Law of the Public Administration Academy
of the Republic of Armenia

SUMMARY

Current issues as regards improvement of fine as a compulsory enforcement measure

The outcome of constitutionally guaranteed judicial and administrative protection of the violated rights and freedoms of the subjects of public and private legal relationships is summarised in judicial or administrative acts respectively. Yet it is well known that they are rarely implemented voluntarily, hence, the Judicial Acts Compulsory Enforcement Service has a significantly fundamental role in this field with its compulsory enforcement proceedings establishing and summarising the outcome of the activities thereof.

The discussions and negotiations on the scientific platforms as regards the compulsory enforcement proceedings of a judicial act and the law enforcement practice thereof are up-to-date, including those concerning the choice and application of either traditional or immediate measures of compulsory enforcement.

The article touches upon the current issues concerning one of the functions of compulsory enforcement officers in the enforcement proceedings, namely the application of “fine” which constitutes a compulsory enforcement measure, and the directions of improvement.

Keywords: compulsory enforcement proceedings, compulsory enforcement measure, fine, administrative fine.